

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«13» դեկտեմբերի 2018թ., թիվ 9

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը, «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 4 որոշմամբ հաստատված «Գործադիր հանձնաժողովի ձևավորման, գործունեության և լուծարման» կարգի 2.3-րդ ենթակետը, 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի նիստի թիվ 6 արձանագրությունը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 4 որոշմամբ հաստատված «Գործադիր հանձնաժողովի ձևավորման, գործունեության և լուծարման» կարգի Հավելված 1.1-ը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

Հ/Հ	Զբաղեցրած պաշտոն	Անուն Ազգանուն Հայրանուն
1.	Գործադիր հանձնաժողովի նախագահ	Արթուր Յուրիի Զավադյան
2.	Հանձնաժողովի նախագահի տեղակալ	Վարուժան Հակոբի Ավետիքյան

3.	Անդամ	Ներսես Հենրիկի Երիցյան
4.	Անդամ	Արման Մուշեղի Փոթիկյան
5.	Անդամ	Արմեն Արամի Հովհաննիսյան
6.	Անդամ	Ինգա Հովհաննեսի Արիստակեսյան
7.	Անդամ	Հայկ Գարեգինի Բաբայան

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնում ընդունման օրվանից:

**Ձինձառայողների կյանքին կամ առողջությանը  
պատճառված վնասների հատուցման  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի նախագահ՝**

**Դավիթ Տոնոյան**